

Հ Ա Ս Յ Է

Rédaction du Journal arménien

ARCHALOUYCE

(EGYPTE) LE CAIRE



ՊԱՅՄԱՆՔ

ՇՆԻՊՑՈՍ

Տարեկան դրոշմ 30

ԱՐՏԱՍՏՄԱՆ

Տարեկան ֆրանկ 10

Փաժանորդ ՅԱԵԼՈՒՍ ՆԵՐԱ Փոխարէն վճարումէ գեծ պիտի ըլլան :

—*—

Թե՛ ԱՐՇԱԼՈՅՍԻ և թե՛ ՏՊԱՐԱՆԻՆ վերաբերեալ ներքին խնդրոց հարևար պիտի և ղիմեղ նմապորտեան հասցեով քերթիս Մասնախարարին, որ է՝

ՊԱՅՄԱՆՔ ՓՈՒՓԱՐՆԱՆ

ԱՂԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԿԱԻ ՀԱՅԱԹԵՐԹ

Փաժանորդագրութիւնը կանխիկ է. իսկ ձանուցումները կ'ընդունուին սխաւնաւոր հասնաւորութեամբ :

ԿԸ ՇՐՏԱՐԱԿՈՒԻ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Յօդուածագիրները ուղղակի պատասխանատու են իրենց գրածներուն :

ՀԱՏԸ 20 ՓԱՐԱ ՈՂՁ

ԲԱՑ ՆԱՍԱԿ

Կ. Պօլտոյ Ազգ. Կեդր. Վարչութեան Պատ. Բաղաքական Ժողովոյ անդամ Համբարձում Պոյաճեան (Մուրաա) ին

Ի Կ. Պօլիտ

Ազնիւ Մուրաա

Բարեկէ Կեդրոնը գտնուած անհանդիմ - 1907 Փետրուար - արդեւ լավաբէն նամակ մը ուղղած եմ Ձեզ, զոր կարգացած ըլլալիք, հոս ի Կահիրէ անձամբ հաստատեցիք Տիար Շաւարշ Շիշմանեանի և Պ. Յակոբի ներկայութեան :

Մէկ երկու օր յետոյ՝ ուրիշ նամակաւ մը, - և այս երկու նամակներուն ընդօրինակութիւնները պահուած են - զրկանքապատում իրաց անփոփոխ կացութիւնը կը բացատրէի Ձեզ, որուն պատասխանելու ժամանակ չունեցաք՝ ինչպէս հաստատեցի յետոյ Ձեր անպարտաւոր մեկնումն ծանօթանալով : Ձեմ կրնար յաւիտաւոր համար, որովհետեւ Ձեր պարտաւորութիւնները այնպէս կ'ստիպէին ձեզ թերեւս Բայց ըսէ՛ք ինձի ինչո՞ւ Հիւս Ռեթիսէն օգտուելու զղջներուն գործերը մեծագոյն մասամբ մէջ տեղ բերուեցան, իսկ եմ վրայ գործադրուած ոճրոյն և իրաւանցս պաշտպանութիւնը դեռ առ կախ կը մնայ այսպէս :

Այժմ, քանի որ դէպքերը հիմնապէս փոխուած են, գէթ բարեհաճութիւնը ունեցէք անձնական երկտողով մը հաղորդելու շնորհը ընել ինձ թէ՛ իմ եզրուածի նման կրկնապէս ազատ երկրի մը մէջ բռնաբարուած իրաւունքներս ի՞նչ միջոցներով պէտք է որ պաշտպանեմ . . .

Յարգանք
Ե. ՔՈՐՈՍԵԱՆ

ԱՆԾԱՆՕԹ ՀՈՐԻՋՈՆՆԵՐ

Վերջին թղթերով հասած ֆրանսական թերթերուն մէջ աչքիս զարկաւ լուր մը՝ որ ապահովապէս շահեկանութենէ զուրկ ըլլալու չէ հայ ընթերցողին համար, քանի որ մեր բարբերն ալ սկսած են սերտ յա-

րարութիւն ունենալ եւրոպականին հետ ընդհանրապէս, և ֆրանսականին՝ ի մասնաւորի :

Կարգ մը երեւոյթաններ մտադիր են եղեր Խորհրդարանին պահանջել Բաղաքային օրինադրին 213 ըդ. Յօդուածին ջնջումը :

Այս Յօդուածին տրամադրութիւնը կը վերաբերի ամուսնական բանաձեւին, և որուն մէջ ըսուած էր թէ՛ « Էրկի մարդը պաշտպանութիւն կը պարտի իր կնոջ՝ ինչպէս և կինը պարտաւոր է հնազանդել իր ամուսնոյն » :

Անմեղ և հասկնալի բացատրելակերպ մը՝ ինչպէս կը տեսնէք, և որովհետեւ « հնազանդութիւն » բառը խորդ կը հնչէ կոր եղեր անկախութեան սիրահար ֆրանսուհիներուն, երեւոյթաններ՝ քիչ մը իրենք ալ կնոջական հարցին համակրողներ, քիչ մը դաշիական ցալաներէն էն մղուած, կուզեն որ այդ բառը ջնջուի :

Թո՛ղ ջնջուի . . . :

Ասիկա շատ բնական բան մ'է արդէն : Կիններն ալ մեզի պէս բանաւոր արարածներ են վերջապէս, և ի՞նչ իրաւունք ունինք սպասելու որ անոնք իրենց քանահոգիքին համեմատ չ'ապրին, չ'ստատեն, չ'թուշտին ծաղկէ ծաղիկ չ' ճուղեն սպառնալով :

213 ըդ. յօդուածը՝ կիններուն համար՝ տեսակ մը վանդակ էր, ոսկեզօծ ու գուռը բաց, բայց վերջապէս նախատինք մը, նշանակալի pince-sans - rive բանապետութիւնը էր գեղեցիկ սեռին վրայ :

Այդ բանապետութիւնը՝ ի՞նչ որ ալ ըլլար, հանդուրժելի դարձած էր այն խաւարակուռ դարերուն, երբ կինը տեսակ մը գրաստ էր՝ այնպէս ինչպէս է այսօր, տեղ տեղ, Իսլամ « հարէմը », բայց այսպիսի բան մը ներքին է քաղաքակրթութեան այս դարուն մէջ երբ կինն ալ իր բոլոր իմացական կարողութիւնները ի յայտ բերաւ, երբ կինն ալ կը վայելէ ամեն ազատութիւն, և թէ 213 յօդուածը ինքնին անիմաստ տառ մըն է՝ միայն բարբարոսութեան օրերը յիշեցնող : Աւանդութիւններ, օրէնքներ

կան արդարեւ որոնք գործնականին մէջ լոկ ձեւակերպութիւն մ'եղած ըլլալ կը կարծուի, առերևոյթս օգտակարութիւն մը չունին, բայց՝ տեսականին մէջ՝ անոնք իրենց լայն տեղը ունին :

Մարդկութեան երեքաժուի նաւը դէպի ուղիղ ճամբան առաջնորդող ջահեր են անոնք : Ընկերացի յաճախող չեմ, ամբողջ օրը գրեւոր զբաղած եմ արդէն և ընթերցարան երթալու պէտք չունիմ, բայց կուզեմ որ ամեն գնով թէ՛ եւ կեղեցին և թէ՛ ընթերցատունը իրենց գոյութիւնը պահեն, կըսէր անցեալ օր ինձի հայ հանրածանօթ օրագրող մը, և իրաւունք ունի. և երբ անոնց շէնքէն բան մը կը պակասեցնենք՝ պէտք է զգուշ ըլլալ որ անոր հիմքը դէթ բոլորովին չի խախտի :

Կարելի չէ՞ հարցնել այդ ազատասէր երեւոյթաններուն թէ, եթէ 213 ըդ. յօդուածը ջնջուի՝ անոր տեղ մեզի ի՞նչ պիտի տան : Կրօնքը նախապաշարում է, առասպել է ըսին, և կրօնքը իր ուժը կորսնցուցած ամուսնական անխախտ ուխտը կղերին ծրարած դաւանութիւնն է ըսին և անոր տեղ աշխարհ ապահարզանով լեցաւ : ապօրինի կեանքը, շուտ թիւնը մեղք չէ ըսուեցաւ, և մարդիկներ սկսան փողոցային կեանքին անձնատուր ըլլալ : կինը ազատ պէտք է որ ըլլայ ըսուեցաւ, և կին եղև ազատ : կը մնար բանաձեւ մը, և ան ալ թո՛ղ վերջուի :

—Ան՞որ տեղ ինչ . . .
—Սէր և փոխադարձ յարգանք, կը պատասխանեն ֆրանսացի այդ երեւոյթանները :

Շա՛տ լաւ և շա՛տ բարի : Բայց երբ ֆրանսայի մէջ ծննդաբերութիւնը սկսաւ նուազել, բարբերը վատթարացան մինչև իսկ « հնազանդութեան » հովանիին տակ, որ վերջապէս դրական սանձ մըն էր մէկ կամ միւս կողմին համար, սէրը ի՞նչ պիտի բերէ ձեզի, և մեզի, և ամբողջ քաղաքակրթեալ աշխարհին, սէրը յեղյեղուկ, սէրը՝ քանահաճ, սէրը՝ անկաշկանդ, ճախրասրլաց . . . :

Ինչի՞ պիտի ծառայեն բանաձեւերու փոփոխութիւնները՝ երբ

մարդուն բարոյական ծառը սկսած է իր արմատէն փոխել, երբ ապականութիւնը կը տիրէ ամեն խաւերու մէջ, և երբ « ընտանիք » բառը կորսնցուցած է իր աւետարանական սուրբ նշանակութիւնը :

« Հնազանդութիւն » բառն էր միայն որ կը մնար անշիղ բեկորը հին բարի ժամանակներու աւանդութիւններէն, և անոր սպանումը պիտի նշանակէ հիմա կնոջական հարցին վերջնական յայթանակը, այդ - մարդուն ֆօթ-Սթիւրը :

- Հետեւա՞նքը
- Այր ազատ, կին ազատ : արա զոր ինչ կամիս :
- Յետո՞յ
- Դէպի անձանօթ հորիզոններ, թերեւս դէպի սիրոյ (?) դարաւտովայրը, թերեւս . . . Սողոմ-Կոմոր :

Ս. Օ.

Ն Ա Մ Ա Կ Ի Ա Ր Բ Ե Ր Դ Է Ն

ՄԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Դահիրէի « ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿԱՍ ՄԻՈՒԹԵԱՆ » Գրասենեակէն (քիւրօ) հետեւեալ նամակը զրկուած է մեզ հրատարակութեան խնդրանք :

« ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿԱՍ ՄԻՈՒԹԵԱՆ » նպատակն է, ինչպէս կը հաղորդուի մեզ, մեզմէլ ու սահմանափակել այն ամեն անխոստովանելի չարիքները՝ որ կարգ մը անխիղճ հայեր, խեղճ հայերու վրայ ի գործ դրած են և դեռ միտում ցոյց կուտան ի գործ դնելու, զանազան պատրուակներու տակ :

Ահա « ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿԱՍ ՄԻՈՒԹԵԱՆ » ամենազլխաւոր նպատակին սեղմ գծերը : Անոնք անողքաբար հանրային դատաստանին միայն պիտի ենթարկեն ակնարկուած չարիքներու մանրամասնութիւնները, կարելի եղածին չափ սեղմելու անոնց ընդլայնումը, և բարոյական հիմբու վրայ հաստատելու համար հայ ազգային քաղաքակրթութիւնը, որ ժամանակէ մը ի վեր ստոյգ լարի ինքն ինքն մը դարձած է :

Յետագայ նամակը այդ կարգին կը պատկանի :

ԻՄԲ.

ՄԱՍՆԱՃԻԻՋ
ԱԶԳ. ԱՆԿԱԽ ՄԻՈՒԹԻԱՆ
ԽՈՐՔԵՐԻ
ԱՐԵՆԻ ԱՐԻԻՆԸ
ԿԸ ԲՈՂՈՔԷ

15 Հուլիս 908 Մ. Ազիզ

Արշալոյս ի 510 թիւին մէջ նոյն թերթի խմբագրութեան Բարտաղար Տ. Եղիշէ Թորոսեան, որ շատ հին ծանօթ մ'է... տեղոյս, ծաղկաքաղ մը ըրած է, յանուն Հայ Յեղափոխութեան ազգէն դըրամ շորթող գործիչներուն կեանքէն, որոնք հիմայ բերանին սըրբելով երէկի կերածին մուցած ըլլալու և ժողովուրդին քամակէն հեզնող ծիծաղ մը փրցնելու պէս հաճաքներ կը վայելեն, կ'ըսէ, ու ասանկներն ալ՝ հիմայ ազատագրուած Հայ ժողովուրդէն պսակ կսպասեն ընդունել անամօթ անհրետութեամբ:

Միևնոյն թուով ակնարկած էր մասնաւորաբար Խարբերոյցի Ռուբէն Զարգարեանը, որ իր դրամներուն նայելով՝ 100 Քր. Օրմանեանի խըրկելու ազգասիրութիւն ունեցած է, ու հիմայ ալ զայրոյթով կը տեսնէ որ յիշեալ գումարը տեղ չէ հասած՝ ու անկէ հայելու կուզէ, ինքզինքն ալ անշուշտ Հայ Յեղափոխական ներկայացուցած Պօլսոյ հրապարակին վրայ, ու Պօլսեցիներէն ալ անկասկած իր արժանիքին վայել յարգանք ու պատիւ կ'սպասէ:

Տ. Թորոսեան իր ԱՄՄԲ ըսած է անոր մասին թէ՛ Խարբերոյցի մէջ իր իբրև յիղափոխական ըրած չափահատութիւններուն... հաշիւը ո՛վ պէտք է պահանջէ:

Արտասահմանէն նոր դարձած են մենէ շատերը, և մինչև հիմայ յիշեալ Զարգարուն պարունին նըկատմամբ չ'գիտցածներն կը սերտենք, արդէն մեր գիտցածներուն կցելու համար, և ասոնք՝ արտասահման գտնուող ամեն հայ պղտանքով և անէճքներով յիշելէ վերջ, կ'սպասէին անշուշտ որ անիկայ անգամ մ'ալ ԱԶԳ-ԱՅԻՆ ԱՆԿԱԽ ՄԻՈՒԹԻՒՆԸ ներկայացնէր, ուղղակի իր տեղւոյն վրայ ուսումնասիրելէ յետոյ:

Բայց այս պարոնը - Զարգարեան - որ Ամերիկա և շատ մը ուրիշ տեղեր մինչև ակնայնին ծայրը սևով ներկուեցաւ, իբր Դաշնակցական Պօլս կուգայ, և ինչ յաջողութիւններ կը զիմաւորեն զինքը Վոսփորի կապոյտ շուրերուն եզերքը, ուր երեսը լուսնալով երկու թաղի կողմէ ալ Ազգ. Երեսփոխան կընարուի:

Յիմարը Պօլսեցիք են, թէ ճարպիկը Զարգարեանն է, որ մուսնի կը յաջողի իր տպականուած ու տխուր անցեալը. անցեալ մը՝ արիւնով ներկուած, որուն համար հաճաքներն անգամ չ'եղու ելած կ'անիծեն զինքը:

Գողութիւն, սպանութիւն, մատնութիւններ ընելէ յետոյ, հիմայ ալ իբր հաւատարիմ Դաշնակցական, բերանը ու ճակատին սևը սրբելով՝ ազգին ներկայացուցչի անդամը կը ըլլայ:

Ո՛չ, եղբայր, եթէ հայ յեղափոխականն այս է, մենք այսպիսիներուն նկատմամբ անէճք ու պարտաւանքը արժանի կը գտնենք:

Զարգարեան մը՝ մեր ու բոլոր Ամերիկահայ գաղութին համայնական համոզումով չ'արգարանար ասանկն, թող կուզէ «Ռազմիկ» հըրատարակէ, կուզէ թող համայն աշխարհը բազմաթիւ թերթով ուղղէ, ու աս ասեն քաջալիբական չէր մեզ ըրած ամբողջ Խարբերոյցայերէն, որ միշտ կը կրկնեն թէ՛ «Եթէ այն ազատութիւնը բերողներուն մէջ տաճիկ էլ մասին տղան ալ ինքզինքը հետոս և գիւցաղն կը հաւատայ, մենք կուզենք որ իրական տաճիկին զերին ըլլանք քան...»

Յարգ. Մարինիկցիներ կը բողոքեն անոր դէմ, որ 200 ոսկոյ արժէքով եկեղեցական սպաս գողցաւ անոնց գիւղական տաճարէն: Իր անմեղ ուսուցչին արիւնը կը բողոքէ... Թիւֆէնիկեանի գերդաստանին մանկամարդ հարօին... ստուերը կը բողոքէ...:

Ո՞րն ըսենք. ան ատեն Հնչակեան յեղափոխական կամ տյս անանուամբ առաջ կը տանէր իւր սրկայութիւնները. վերջը Դաշնակցական կանուանէ ինքզինք. ամեն օր՝ շապիկը նոր է ինչպէս որ դպրոցէն ելլելէ յետոյ նախ բողոքական կ'ըլլայ վերջը լատինութիւնը կ'ընդունի պսակուելու համար, իր զսակները հոն մկրտել կուտայ ու լատինաց ուսուցիչ կը ըլլայ և վարժուհի մը հետ օյնի հանելով կը վաճառուի այն տեղէն ու հայոց դպրոցներուն դուռը ձեռք կ'առնէ, ու շատ մը անուղղակի միջոցներու շնորհիւ վերջ ի վերջոյ կը յաջողի:

Այս տեղէն ահա իր անաւոր և անիծապարտ շահատակութիւնները ծայր կուտան: Դպրոցը տակն ու վերայ կը ըլլայ, ու ինք՝ կուսակցութե՛ գործը հետզհետէ գէշ պիտի ըլլայ, Պօլսի արիւն կ'ապաստանի ուր՝ ինչպէս կ'իմանանք, հանգիստ և հասութեաբեր վիճակ մը կ'ունենայ, ու իր շարագործութիւնները երգելով համակրանք կը մտայ ազգին միւս պաշտելի գործիչներէն:

Ամօթ Պօլսոյ պէս լուսաւորեալ տեղւոյ մը համար, որ Զարգարեան մը իր ծոցին մէջ պահելով անոր երես կուտայ, ու զայն Մուրատի պէս անկեղծներու հետ կը գնահատէ:

Վարչութեան համար
ԶԱՐԳԱՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

ՆՈՒՊՈՏՈՒ
ԳՆԻՍԵ ԸՆԴՆՎ. ԺՈՂՈՒՅՍ
Թիի 135

Հաղորդուած «Արշալոյս» լրագրի Պատ. Խմբագրութեան Գահիրէ 19)23 Նոյեմբեր 1908

Գահիրէի Ընդհանուր Ժողովն ի նիստ գումարուեցաւ ամսուս 2)15ին Կիրակի օրը, Պուլաղի Առաջնորդարանին մէջ, Առաջն. փոխանորդ Արժ. Տ. Յարութիւն Աւագ. քա-

հանայ Յակօբեանի նախագահութեամբ և անգամոց մեծամասնութեան ներկայութեամբ:

1. Կառավարութեան մատուցանելի կազմական Կանոնադրի Յանձնաժողովը պաշտօնը աւարտած և կանոնադրի ուրուագիծ մը իր տեղեկագրին հետ ժողովոյս մատուցած ըլլալով, որոշուեցաւ որ անոնցմէ մէյ մէկ օրինակ զրկուի Գահիրէի և Աղէքսանդրիոյ Երեսփոխանաց ու յետոյ նոյն երկու քաղաքաց Ընդհանուր Ժողովներն համագումար նիստ կազմելով խորհրդակցին յիշեալ ուրուագիծի ու տեղեկագրի մասին և հարկ եղած որոշումը տան:

2. Ժողովոյս նախորդ երկու նիստերու ատենագրութիւնները կարդացուեցան և առանց դիտողութեան վաւերացան:

3. Ատենագրոյի Նշան է՞ք. Մալուճեանի Երեսփոխանութենէ երկրորդ անգամ տուած հրատարականը ընդունուեցաւ և դաղտնի քուէարկութեամբ ժողովիս ատենագրոյ ընտրուեցաւ Կարապետ Պէյ Շէրիտեան:

Ատենագրոյի Ընդհանուր Ժողովոյ
Կ. Յ. ՇԵՐԻՏՃԵԱՆ

Մ Ա Ն Ա Գ Ո Յ Ճ

Այլի Տիկին Սօֆի Բ. Նահապետեան, Տիարք Նահապետ և Դէորդ Բ. Նահապետեան, Օր. Հռիփսիմէ Բ. Նահապետեան, Տէր և Տիկին Յովհանէս Ալալմճեան (Կ. Պօլս) Տէր և Տիկին Թ. Նահապետեան (Կ. Պօլս) Այլի Տիկին Արուսեակ Պալեան (Կ. Պօլս), Այլի Տիկին Էլզաբի Մանուէլեան (Կ. Պօլս), Տէր և Տիկին Կարապետ Պալեան, Այլի Տիկին Հռիփսիմէ Բէսէտարեան Տէր և Տիկին ձօն Տէր Արմինեան (Կ. Պօլս) և Զօիւրեան, Պարտիզանեան, Ալալմճեան, Յուհանէսեան ընտանիքները, ցաւօք սրտի կը ծանուցանեն գառն մահը:

Տ. ԲԱՐԹԻԿ ՆԱՀԱՊԵՏԵԱՆԻ
Իրենց ամուսնոյն, հօր, եղբոր մօրեղբոր և ազգականին, որ հանդեաւ ի Տէր, Երեկ Ուրբաթ, յեր միջոցէի ժամը 4 ու կէսին, ի հասակի 65 ամաց:

Կը խնդրուի ներկայ գտնուել յուղարկութեան տխուր արարուղութեան՝ որ պիտի կատարուի այսօր, Երբաթ 28 Նոյեմբեր, յետ միջոցէի ժամը 2 ին, հանդիսեցելոյն բնակարանին մէջ ի մէկկալէ (կալուած Ապտիւլ Մէսիհ), ուրի՛ք՝ մարմինը պիտի փոխադրուի Ս. Աստուածածին եկեղեցին և անտի Մարմինայի Ազգ. գերեզմանատունը:
Գահիրէ, 28 Նոյեմբեր 1908

Ա.Չ.Գ.Ա.ՅԻՆ
Լ Ո Յ Ց Ց

ԱՐՁԱԳԱՆԻ
Երուսաղէմէն հետեւալը կը գըրեն «Արձագանք» ին:
«Վերջապէս Պատրիարքին սպասուոր Աւետիսին վեց դիրք գրին:

Կառավարութիւնը երկուսուսուր թուրքերը և նոյն իսկ օտար ազգերը համադրուած էին թէ այս դարաւոր հաստատութեան քայքայման պատճառն են Աւետիսը և իր արքանեակ Մատթէոս, Պետրոս, Դաւիթ և Աճէմեան Սարգիս վարդապետները: Կառավարութիւնը բռնութեամբ դուրս հանեց Աւետիսը 3000 է աւելի ամէն ազգի բազմութիւն մը խոնրած էր Վանքին հրապարակը և շուկան, ու Աւետիս մոլեգին է ետ հաններու մէջէն անցաւ դնաց: Եթէ կառավարութիւնը զգուշութիւն չ'ընէր, զինքը կտոր կտոր պիտի ընէին, այնքան բուռն էր ժողովուրդին վրէժխնդրութիւնը: Կը կարծուի թէ այսօր 15000 ոսկի տէր է պատրիարքին այս սպասուորը: Տ. Յարութիւն պատրիարքը սաստիկ զայրացած է ցուցարարներուն դէմ: Միաբանութիւնը վաղը պիտի դիմեն Պատրիարքին և Ընդհ. ժողով պիտի պահանջէ: Յայտնի է թէ հակասահմանադրականները չպիտի թողուն որ Ընդհ. ժողովը դուժմարուի, որով կուրը հաւանական է: Գաղաքացի Հայ ժողովարդին հետ Միաբանութիւնը միացած է և միասին կը գործէ ի շինութիւն Վանքին:

ԱՄՔԱՍՏԱՆԵԱԼՆԵՐ

Հաւատի աղբիւրներէ Կ. Պօլսէն մեզի տրուած լուրերու: Նայելով, Կեդր. Վարչութեան Ազգ. Երեսփոխան ժողովոյ անգամներէ ոմանք զիտաւորութիւն ունին եղեր առաջարկել Դիւանին, որպէսզի ախյափայ ընտրուած ազգային Երեսփոխաններէն Պարոնայք Յարութիւն Զանկիւլեան և Ռազմիկի Խմբագրի Ռուբէն Զարգարեան, իբրև ամբաստանաւորներ ձայն չունենան Պատկ. ժողովոյ մէջ ց'նոր ստորինութիւն:

Այս երկու պարոններուն ինքնարդարացումը Պատրիարքարանի մեծ սրահին մէջ պիտի լսուի եղեր:
— Ս. Պատրիարք Հայրը յայտարարած է թէ Վարչութեան Կեդրոնը Պատրիարքարանը ըլլալուն, օրէնք է որ ժողովները կեդրոնին մէջ գումարուին: Ասկէ զատ փափաք յայտնած է նաև Աղգ. Երեսփոխանական Ժողովն ալ գումարուած տեսնել Մայր Եկեղեցւոյ մէջ, ինչպէս կը ըլլար տարիներ առաջ:

— Պատրիարքարանի մէջ լրասգրական մասնաւոր դիւան մը պիտի հաստատուի, ուր պիտի ներկայանան լրագրիներու ազգ. բաժնի խմբագրիները լուր ստանալու համար:

ՀԱՐՍՏԱՆԻՔ
Անցեալ Երկուշաբթի 23 Նոյեմ. (ն. Տ) 908, Աթապա էլ խառնա՝ Տիար Արշակ Սէտէֆեանի բնակարանին մէջ տեղի ունեցաւ պսակագրութեան հանդէսը, Արժ. Տէր Գարեթէլ Քահանայ Զէնծիրեանի անդրանիկ որդւոյն Տիար Յակոբ Զէնծիրեանի՝ ընդ Օրիորդ Բերկուհի Յ. Սէտէֆեանի:

Հրաւիրեալներու բաւական ըստուար բազմութիւն մը ներկայ էր հարսանեկան հանդիսին:
Մեր շնորհաբուրութիւնը երկու ընտանիքներուն և ազգականներուն:

ՍԱՆՏՈՒՅ ԸՆԿ .

Ուսումնասիր Արմենուհեաց Սանտոյի միջնակարգ դպրոցի ղեկավարը...

Ս. Ա. յայն . Ռ. Սրբազնութիւն յետադաշտաշտօնագրով...

Գահիրէի Առաջնորդարանէն հաղորդուած : Պատճէն Կ Պօլսէն Պատրիարքական Տեղապահարձր . Տ. Եղիշէ Ս. Արքեպիսկոս Գործարար Ե. Պր. Կրտիչ Մ. Վարդապետ Ազատականի ուղղած տարւոյ Սեպտ. 8ի 37 համար պաշտօնաթիւն :

Ստացանք առոյս 1 թուականաւ 2եր նամակն յովի դիմաց քաղաքի Սանտոյի Ընկերութեան կողմէն 10) Երկու հարիւր վաթսուներեք թուանի օր մը ի նըպատ Սանտապատ վանուց աղջկորդանոցին վանայ :

Այս գումարը գանձուած և անմիջական զրկուած է վանայ Առաջին Տեղապահ Եր. Տ. Զաւէն Մ. Վրպի . յատկուելու համար նպատակին . Կր յանարարքն 2եղ մեր սիրոյ ողջոյնը երհնութիւնները հաղորդել նուիրաւ մարմնոյն և քաջալերել զինքն արունակելու իր օգնութիւնն որուն այնքան պէտք կայ զարդիս :

Թիի 690 Այս պատճէնը ուսարիմ է բընագրին որ ի պահայ Առաջնորդարանի գիւտնատանէջ . զրկուած քաղաքիս Պատ . « Ս. Գուրխ » Ընկերութեան Ս. Առաքող հօր այսօրուն թուական 689 համար պաշտօնագրին կցեալ Գահիրէ 7 Հոկտ . (. Տ .) 1908

Կնիք ԱՌՆՈՐԴԱՐԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ Գէորգ Էջ . Ուղիտան Ս. պատրիարք հօր 100 կի զրկած է Հայաստանի սովեաններն համար :

ՊԱՌՈՅ ԱՆԴԱՄ Միացեալ ընկերութիւնը իր կանոնագրին 4 բր . յոգաձին տրամադրութեան համաձայնատոյան դամ ընտրած է վսեմ Արքահամբաշա Բարթողը , որ ինչպէս ասկէ առաջ հրատարակած էին , 100 սակի տարեվճար արձանապուած է Միացեալին :

Կ . Պօլսոյ Կեդրոնէն աւանտիւ

զրկուած գեղատառ պաշտօնագիրը Աղէքսանդրոյ Մասնաճիւղին գիւտնանին միջոցաւ յանձնուած է նորին վսեմութեան :

Ու մտածողներ կան եղեր թէ՛ Լեոն Մկրտիչեան Փուտաբաշային նուիրելի սուրէն զատ կարեոր գործ մը տեսած չէ Աղէքսանդրոյ մէջ . . .

— Պսլոյ մէջ սկսած է առատ քանակութեամբ ձիւն տեղալ . այս պատճառաւ հոն գտնուող կարօտ գաղթականներու վիճակը շատ դառնացուցիչ հանգամանք առած է :

ԲԱՂՊԵՐ

Ինչ է բաղդը , որուն կ'ըսեն անհրաւ . -- Անհրաւը մը՝ թէ հետարձակ մի մայր . Որ իր գաւախց կուտայ անաչաւ՝ ցաւ , երկն , վրեժ ու մահ , բունդ ոտի մարտիւնը զոր անհրաւը զանգուցիլ ինչպէս յայտնուի :

Ինչո՞ւ դու գանգաւիս՝ բաղդը ընկնով իսաղախի , Դու ընտրեալ մայրն ե՛ր ինչպէս ախի , Տա՛յ պիտ պիտ ծաղկումս , դարձիս ու մարգարէս , Մուսան գայ հիւսել « բաղդն » ծայն սայ ծաղիս :

Լսե՛ս . բաղդը փունջ մը վարդ է . փրշոտ փշո՛տ , վարսերուն մէջ փարսարուած թերթեր անոտ . է՛ր անբասանելու զայն՝ գեղջ անդոյր , ահարաւ :

Ու աշխարհն հաւայն ֆեղ հետ՝ կեղծեղով իրա՛ւ . . . 2ե՛ր , լաւ կրկն մը չես . դու հողի գաւախ չես . ես չե՛մ քու մայր հետարձակ , որքան հաւաստիս :

Թախտախ դու՛ գոցուի զնկեր ու խոտիկ , Երբ ինձ հանդիպիս դու՛ կեանք , մահ ինչպէս գորովիս : 11 նոյ . 908 ԵԱՀԷՆ

Ի Ա Մ Ս Ա Կ Ե Ր Ո Ւ Ս Ա Ղ Է Մ Է Ն

ՍԱՂԻՍԱԿԱՆ ԽՆԴՐՈՑ ԶՈՒՐԶ (Շար . նախ . թիւէն և վերջ)

Հազար ամօթ Գայրեքեանի առաջնութեան Երեսին , ինչպէս նաև նըշանեան շիպացած Մեսրոպ Արեղայի , որ հաշուոց Գիւտնի տոմարներն խոշորախնի զարկած՝ ուխտաւորաց մէջ կը չըլէին « Մաքսուտեան 100, 000 սակի պարտք թողած և զեղծումներ գործած է ըսելով . . . Յուրաշական սրտե՛ր՝ որ Առաքելոց Եղբայրական սիրով այրած ու յափշտակուած իրենց բարեկամին ու բարերարին գլուխը տառապանքի ովկէանի մը մէջ ձգեցին . Սա՛ առական առածը ո՛րքան ձիւն է . « Ամաչելու երես յունեցողը վարդի պէս կ'ապրի » : Լեոնեան բարձրութիւնը , ծովերու խորութիւնը կը չափուի , բայց մարդոց սրտերու և զգացումներու չափը ո՛չ երբէք . և այս վերջինը գիտնալու և չափելու համար՝ խեղկատակութեանց Աստուծոյն Միմոսի , Աթենասի , փափաք յայտնած մարդոց սրտին վրայի

պատուհանը պէտք է՝ ուրկէ ամեն բան տեսնուէր ու յայտնուէր :

Կոյր հակառակութիւնք գեռ վերջ չէին գտած . Աղգային վարչութիւնը իր լիազօր պատուիրակներն ընտրեց . Վահրամ Եպիս . Մանկունի և Արիս Փէսճեան՝ ու անոնց յանձնեց Կեդր . վարչութեան ազդող հրահանգները ի գործ դնելու պաշտօնը—Այսինքն անձեռնհասները իրենց պաշտօններէն հեռացնելու և յանցաւորները պատժելու—Միանգամայն ընկելու և պատժելու կուտապղծութեանց հեղինակները . զրկեալ և անիրաւեալ միաբաններու իրաւունքները վերահաստատելու , իսկ այս ամէն զրկանքներն ու հաւածանքները և տառապանքները գործուած էին հաշուեպահանջութեան դիմակի ներքե . Ո՛վ դժոխք . դո՛ւ ալ այս ամենու հեղինակին անունը լսելով պիտի սարսափիս . . .

Ամենէ ցաւալի բանն այն է որ Ս . Էջմիածնայ աւերածին պատճառ և հեղինակ եղող տարահաշակ Մանկունի Եպիսկոպոս , և կաշառներու աղբիւրի ծորակին վարժ բերան մը ունեցող Փէսճեան Արիս , իրենց յանձնուած փափուկ պաշտօնը՝ ամենայն փափկանկատութեամբ և խղճմտօրէն կատարելու տեղ , նախնորդրեցին հակառակութեան ոգով և միակողմանի գործել , Միաբանութեան այրած սրտերը գերեզմանի որդերու պէս կրծելով մաշեցնելու և համբերութեան բաժակի չափը մինչև շրթունք լեցնելով պօռթկացնելու : Մէկ խօսքով այդ ազնուասիրտ (°) գործիչները՝ առասպելական « պանդորեան տուփին » նըման նուէր զրկուեցան վանքին , և իրենց գործունէութիւնը եղան բանակալութիւն , ցաւք , նեղութիւնք , չարիք , աղէտք և այլն « ի կորուսցնել մարդկան դեք միաբանին . . . »

Վարչային պատգամաւորութիւնը՝ ամէն տեսակ շողորդորդութիւններէ և « գոմբիւման » ներէ , ու անդին նուէրներէ , Սարգանաբաղեան ձոխ սեղաններու անուշիկ գինիներէ արբեցած՝ զիրենք զրկող վարչութեան կամքին ու փափաքին բոլորովին հակառակ գործեցին՝ փոխանակ Ազատոյ բերանը առած խաղաղութեան ձիթեւոյ սուտի ճիւղին օրինակով խաղաղութեան սիրոյ լուրը տանելու աւետելու , գիշակեր ազուալին պէս իրենց պարարտացած փսրն ու քսակը տարին . . .

Աստուածութիւնը ո՛ր քաղաքը որ պատժել կուզէ՛ Սողոմ Գոմարի նման , փոխանանակ հրոյ և ծծումբի՝ թո՛ղ մանկունի Եպիսկոպոսը հո՛ն զրկէ . . . 2եմ կարող մոռնալ . օր մը Միաբանական Ընդհ . Ժողովոյ մէջ , երբ՝ Պօլիս զրկուած իրենց սուտերովը լեցուն ճեղքկազիրն , ու իրենց կամաց համաձայն պատրաստուած

« Միաբանական կանոնագիրն » վաւերացնել տալ կուզէին , Մանկունի Եպիսկոպոս սա՛ պէս կ'ըսէր . « հա՛տալք , 2ե՛ղ տեսնեմ . գործելու և յաղթելու առիթը չի փախցնէք . . . »

Ընդդիմադիրները հազար ու մէկ լուտանքով կը նախատէր , և ասոնցմէ մէկն էր իր « աքսորել տըուած » խեղճ Հմայակ վարդապետը , զայն կառավարութեան ձեռքը մատնելով :

Վարդէ ջրով լողանք եղող Մանկունի Եպիսկոպոսը , վերջին պահերուն՝ Ընդհանուր Ժողովով կուզէր որ իրեն ախմախ կարծած միաբանութիւնը շնորհակալութիւն մը յայտնէր . սակայն իր աշխարհահաշակ արքայադժոխքեան և գինք հոս զրկող վարչութեան ու անոր Պետին հասցնելուն , ուխտաւորաց և Միաբանութեան ամէն կերպով նախատած և հայհոյած ըլլալուն համար , իրեն փափաքը փորը մնաց . . .

Ահա սիրելի՛ Մանկունիի նկարագիրը , ինչպէս ուխտաւոր վանեցիկ—Հալէպ բնակող և Արաբկերցի լուրջ անձնաւորութիւններ , երեսին տուին թէ՛ « Սրբաղան » . այդ հայհոյանքները և Միաբանութեան մէջ 2եր ձգած ատելութեան սերմերը , խաղաղասէրի և Աստուծոյ պաշտօնեայի մը չի՛ վայելեր , ամօ՛թ է քեզի . մեզի քովդ ուեղեցիք որ . . . ևն ևն :

Մենք ալ հիմայ կը հարցնենք Մանկունի սրբաղանին թէ՛ Երուսաղէմէն տարած ոսկիները . Մասնիները և բաղնիք դացող կիներու նուէր արուելու համար զնած Ղասիճի յայննեղը Էջմիածինէ յափըշտակած մանկներուն քովիկը տեղաւորե՞ց անտուկներու մէջ . . . ց՛ տեսութիւն . . .

Մէկ երկու շաբաթ առաջ , չորս բաճրատիճան հայրերու կողմէ , ուրոնցմէ մին է Պատր . փոխանորդ Գերապ . Տ . Եղիա Մ . Վ . յանրաւի աքսորելոց , յանրաւի զըրպարտուած և կարգաւոյժ եղած Միաբանից Ս . Աթոռ վերադարձին համար խնդիր մը ևս տրուեցաւ , բայց աւա՛ղ որ՝ Ս . Պատրիարք հօր ազդեցութեանց ներքե լինելուն համար անլսելի կը մնայ միաբանութեանց մեծամասնութեան այս արդար ձայնը . բայց ժամանակները փոփոխութիւն պիտի կրեն անշուշտ . . .

Բռնութեան ներքե վաւերացած և Պօլիս զրկուած « Միաբանական կանոնագրին » դէմ բողոքողները միևնոյն կարծիքին մէջ կը մնան :

Պատկ . Աղգային Երեսփոխան Ժողովոյն մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրենք այս կէտին վրայ . . . ամօ՛թ է այսքան հակառակութիւններ ու կոյր ատելութիւնները և ուր . . .

Երուսաղէմ ՀՐԱՅՐ

ԵՂԻՇԷ ՓԱՄՊՈՒՔՃԵԱՆ

ՇԱՐԷ ԱՊՏ ԷՂ ԱԶԻԶ ԳԱՐԱԳՈՂԻՆ ԴԻՄԱՑ

Միակ ներկայացուցիչն է Աղգային Հիւանդանոցի Սիկարի Թղթերուն , կը վաճառէ մեծաքանակ և փոքրաքանակ .

1909 տարւոյ պատի և գրպաներացոյցներ զնելու համար միայն մեր վաճառատները զիմելու է , և կամ դիւրութեան համար Արշալոյսի Տպարանը .

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԾԻՒՄՈՏԻ ԵՒ ԸՆՏԻՐ ՄԻԿԱՐԵԹՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱԿԶ - ԷԼ - ՊԻՐԲԷ ՓՈՂՈՑ ԷՕՁՊԷՔԻՅԷ



ՄԵՓԱԿԱՆՍԵՐԲ

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷՐԲԱՆ ԵՂՐԱՐԻ

ՅԱՏԿԱՆԵՐ ԻՐԵՆՑ ՎԵՐԱՊԱՀԵԱԼ Է :

Արևելեան ընտիր ծխախոտներէ պատրաստուած թարմ սիկարէթներ անմրցելի ածան գներով ունենալու կամ վայելելու համար, ամէն անգամ և ամէն տեղերէ աւելի՝ պէտք է նախընտրել մեր վաճառատունը :

Առաջնակարգ տեսակներէ Եւրոպական սիկարտներու լաւագոյն զանազանութիւնները գտնելու համար՝ հարկ չկայ հաս ու հոն ժամաւաճառ ըլլալու . բաւական է անգամ մը անպատճառ այցելել մեր վաճառատեղին :

Պարտական ամենաընտիր թէմպէքի ալ և ալ տեսակները բացի մեր վաճառատունէն, ուրիշ տեղերէ գնելը պարզապէս սալի է :

Մի վաճառատունը վերջապէս, գիներու ածանութեամբ, տեսակներու բազմազանութեամբ ու ճոխութեամբ և ալ ամէն տեսակներով, և մասնաւոր գործածել որոշած ապրանքներուն թարմութեամբը անմրցելի է, որուն անժխտելի ապացոյցներէն մին ալ զարգացած եւրոպացիներէ օրրստօրէ մեծ քանակութեամբ և ստուար թուով եղած յանձնարարութիւններն են :

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷՐԲԱՆ ԵՂՐԱՐԻ

ԱՐՄԻԻ

Աղջային, Գրական, Կրթական, քական կիսամսեայ հանդէս, որ կը հրատարակուի ամէն ամսոյ 1 ին և 16 ին . Տարեկան բաժնեկիցին է արտասահմանի համար 7 ֆրանք, վեցամսեային՝ 4 ֆրանք բացարձակապէս կանխիկ :

« ԱՐՄԻԻ » ը Ամերիկայի ամենէն անկախ անաչառ և անվար հանդէսն է, որուն խմբագիրը, միս միակ, կրցու արտասահմանական յեղափոխաբուծներ և դրամաշորթներ քօղամերկել ու ջախջախել :

« ԱՐՄԻԻ » ը շարունակ կը հրատարակէ գեղեցիկ բանաստեղծութիւններ, ու Եւրոպական գրականութիւնէն հոյակապ նորաղէպեր : Իր թիւ Ժ . էն սկսեալ կը թարգմանէ « Եսթեր » անունով հայկական վէպ մը, որ 1901 ին լոյս տեսած է Անդրիոյ մէջ : Հեղինակը, Վարդենի կեղծանունով, մօրը կողմէն անդլուհի, հօրը կողմէն հայուհի մը, ակունատես զած է 1896 ի կտորած ին զոր նը կարագրել կը ջանայ անոր ամբողջ սրտակեղծութեամբը : Վէպին հերոսը անհատ մը՝ կամ ժողովուրդ մը չէ, այլ Սուլթանին արինապետութեան Կարմիր Արհաւիրքը :

« ԱՐՄԻԻ » ի բաժանորդագրուիլ ուղղորդել թող դիմեն Խմբագրութեան կամ ուղղակի իր հասցէին :

Editor of ARDZIV
P.O.Box 2285 Boston - Mass.
Յ. Գ. Ապուսիկ ապագրանքներու շարքութեան չեն առնուիր :

ԾՄԱՆՈՒ ԳԻՐՔԵՐ

« Արշալոյս » ի ապարանին մէջ, Շէրիֆ բաշայի պարտէզին դիմաց՝ կը վաճառուին հետեւեալ պրօշիւրները :

- Ա. ՊԱԼԵԱՆ
- ՃՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՄԱՏԵՆՈՒԱՐԱՆԸ
- Թիւ 1 Թրքուհին 50 սանթիմ
- « 2 Հիւլէն 50 »
- Թիւ 3 պրօշիւրը թլեւ հրաշալիք մը բայց ինչ ինչ նկատումներով զանց կընենք անունը յիշատակել կարճ ժամանակի մը համար . գինն է մէկ ֆրանք . Գիմը Արշալոյսի կամրադութիւնէն զատ Հեղինակին հասցէին որ է .
- Mr. A. Balian
- Le Cairo

ՕԹԷԼ ՏՐԱՊԷԶՈՆ

ԱՂԻՔՍԱՆԴՐՈՍ
Գանթօ, Սուգուլ Մանկաթի 3 Թէթիլիէթ-Էլ-Բալչանի փողոց 3 Մանկաթի Մզկիթին դէմը, Թիւ 3 Պանդոկապետ - Մ. Գէորգեան

Կը յանձնարարուի արգոյ հատարակութեան և ի մասնաւորի մեր հայրենակիցներուն քաղաքին կեդրոնը գտնուող և օգուտէտ դիրքով սոյն պանդոկը, ուր յաճախողները պիտի գտնեն կատարեալ մաքրութիւն և փութական սպասարկութիւն :

Գիմեցէք անգամ մը և գոհ պիտի մնաք .
Գինը չափաւոր են . 28-55

ԿԱՐՆԻՈՐ ԱԶԴ

Գաւառներու համար Գործակալներու պէտք կայ դիմել Թերթիս Խմբագրութեան հասցէին :

ՄԻՆԿԸՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉ Ժ . ՆՅՏԼԻՆԿԷՐ

Պալաքի փողոց . Խաղնէտարի սեփականութիւն, Պրիսթօլ Օթէլի ճիշտ դիմաց Գաֆէ Տը Լա Պուրսիկից

Հիւ եւ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄԸ ՄԷՋ ՄՍՍԵՆՈՒՂԵՐ ՈՒՆԻ


Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները Մինկերն են և ասոնցմէ մինչև ցարդ 17.000.000 ծախուած է :

400 հ աւելի վիսյախան և մեքայներով վարձարուած, Երասառեայ մեքենաներ,

ԱՄԵՆԷՆ ՄԵԾ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ
Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստանշխիսի մէջ ստացած է .
ՀԱՅՔԱՅՐԻՉ ԲՐՈՒՍԻՈՑ ՀԱՅՔԱՅՐԻՉ ԱՆՊՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ
ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻՔԻՆ ԵՒ ԹԱԳՍԻՐՈՒՆ ԱՐՔՈՒՆԵՍ
ՀԱՅՔԱՅՐԻՉ Ն . Բ . ԵՅԻՎԱԿՍ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ Մինկերի յատկանշիկ



Չրի ստեր և նորոգութիւններ Սինկեր մեքենայից հար, յաճախորդատուներն մէջ :

Վճարանց դիւրութիւն
Փանակութիւն հիներու և նորութիւն ամեն կարգի մեքենայից

ԳԻՆ ԶԱՓԱՆՈՐ

ՍԱՐԳԻՍ Յ . ԹԱՇՃԵԱՆ

Նորոգիչ կարի մեքենաներու, ֆոնօկրաֆներու և կազի վառարաններու :

Տասներկու տարին « Մինկեր » ընկերութեան քով մեքենայարգարութեան զբաղելի յետոյ, այժմ դիմավաճառ Զախարիա Գոնտարիսի քով պաշտօնեայ է գէնքերու և մեքենայարգարման ճիւղին մէջ :

Կարգ մը բարեկամ յաճախողներու ինքրանաց վրայ, պաշտօնէն դուրս ունեցած իր պարագոյ ժամերը պիտի տրամադրէ կարի մեքենաներու, ֆօնօկրաֆներու, կազի վառարաններու, նորոգութեանց և յարգարման :

Առ այժմին պէտք ունեցողները փոխանակ ս ու հոն թափառելու կրնան դիմել, տունը Շտաբ Մուսմէտ Ալի Թանթ-Էփօպէն կրնան հարցնել նաև Մեծ Սրբան Հայկականի Տնօրէններուն, և գծեալ դիւրութեան համար քարթ բոստալ մը կրնան դիմել « Արշալոյսի » Տնօրինին . նշանակելով իրենց հասցէն փողոցին անունը և Տունին թիւը :

Իր նորութեանց վարձքը պիտի ստանայ իր յանձնուած աշխատութիւնները լրտալ և փորձել կատարուելէ յետոյ :

Կարի ն մեքենաներ ալ կը վաճառէ : 19 - 50

ԱՄՃԱ ՊՕՂՈՍ Կ . ՕՀԱՆԵԱՆ

ԳԱՆՔԱՐԷԴ ԷԼ ՏԻԳՔԷ Ն՝ 13

Պատիւ ունի յայտարարելու իր յաճախորդներուն թէ՛ իր նոր ապրանքները՝ մասնաւորապէս Իզմիրէն հասած են և՛ գոհացումն իրեն դիմողներուն պատրաստ է հայթայթել երեսուն տեսակի չափ անուշեղէններ (բէշէլ) շուրուպներու զանազան տեսակներ, պարական լոգում պատէմլի և Փատիլը . Իզմիրի անարատ ձվեթախը և անատիլ ընտիր իւղ, անման թուղ . թարմ լէպլէպի, չամիչ օղի (տիւղ) սև և ճերմակ ընտիր գինի, մաստիքա, գոնեաք, և շնէն . Իրեն դիմողները կատարելապէս գոհ պիտի մնան . գիմեցէք, փորձեցէք և տեսէք :